

ՔԱՃԱՆՈՐՈՒ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուշկարիոյ համար
 Տարեկան 10 Յր.
 Վեցամսեայ 7 " "
 Արտասահմանի հա-
 մար տարեկան 12 "
 Վեցամսեայ 6 "
ԿԱՆԻՍԻՆՎԱԾԱՐԱՆԻ
 —)(—
 Գրութիւնք և՛ չեն տրուիր
 —)(—
 Ծանուցում տողը 20 սան-
 րիւն է. երեքին աւելի սան-
 րաներու համար 20 Օլօ
 գեղջ կը լինայ :

ՇԱՐՋՈՒՄ

BARNA
 R. P. Kallénkarian
 (Austria)
 Meublaristengasse W. 4
 Vienne

համակ և գրակ դրիւն
 իմրագրութեան հասցիսն

Рѳакція на вѳсѳникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

1899

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

1899

Ազգային տարւոյ քօղը վեր առնելը արդարեւ տաժանիկ պարտականութիւն մը կը կազմէ :

Որքան բերկրանքով պիտի թուէինք տարուան մը ընթացքին մէջ տեղի ունեցած ընտրի, յուսադրիչ գէպքերը, այնքան տրամաթեամբ կը համակուինք տեսնելով թէ ոչինչ կամ գրեթէ ոչինչ ունինք մատուցանելու մեր ընթերցողներուն՝ իբր տարւոյ վերջի նուէր մը, որ խոյտացնէ անոնց հայու սիրտերը և ցնծութեամբ պարուրէ զանոնք :

Հոն ենք, ուր որ էինք երեք հարիւր վաթսուն և հինգ օր առաջ, ուր որ էինք հինգ դար առաջ :

Թուրք բռնակալութիւնը տարի մըն ալ ունեցաւ, իր կատաղութիւնը, տեսակ տեսակ պարտութեանց, նուաստացումներու վրէժը թափելու մեր գլխին : այս անգամ՝ աւելի սքողուած, աւելի դարավերջիկ ձեւերու աակ :

Հայաստանի վիճակը շատ տըխուր դոյներով կը նկարագրուի. հազարաւոր որբեր, այրիներ կան այն տեղ, որոնք հակառակ արտաքին օժանդակութեանց, հեռի են դոհացուցիչ պատուպարաններ գտած ըլլալէ : Պատրիարքին համար շատ գէշ կը խօսուի, շատ ձախող կերպով բռնած է ազգային բուն խնդիրը, ամէն շարիք արմատապէս բուժելու խնդիրը. և իր ամբողջ գործունէութիւնը խաբուսիկ երթեւեկներու, բանակցութիւններու մէջ կը սահմանավակէ :

Տարւոյս ցաւայի գէպքերէն մէկն եղաւ նաեւ կրօնափոխական շարժումները, որոնք հոն հոս պատահեցան, մէկ կողմէ ծայրայեղ թշուառութեան և միւս կողմէ հրապուրիչ խոստումներու առջեւ : Բայց այս բոլոր կորուստները կրնան յաջողութեամբ դարմանուիլ, նոր կեանք մը սփռել Հայաստանի փլատակ և աւեր քաղաքներուն ու գիւղերուն մէջ :

եթէ գործերը, հեռաւոր երկիրներ թափառող մեր հազարաւոր պանդուխտները օր առաջ, ժամ առաջ փութան խումբ խումբ իրենց հայրենիքը վերադառնալու մտախալի է հաստատել թէ վերջին ժամանակներս, մեր պանդուխտները ըմբռնած ըլլալ կը թուին թէ, ս'ըբան վայրագ, հակամարդկային բան է իր զուակը, կինը առանձին ու անպաշտպան թողուլ երկիրն մէջ, օտար ափերու վրայ աննպատակ, թշուառ կեանք մը վարելու համար : Պանդուխտը պէտք է միանդամ ընդ միշտ ըմբռնէ թէ իրեն համար, հայրենիքի ծոցէն դուրս երջանկութիւն չը կայ և ո՛չ ալ անդորր կեանք. և նոյն իսկ եթէ ոսկիներու մէջ լողայ՝ իրենները քրդին ճանկերուն մէջ թողած ըլլալու մտածումը, իր ճի խայթը, կրնայ պահ մը հանդիստ թողուլ զինքը : Ուստի պանդուխտը սկզբած է երկիր դառնալ : «Ինչ կըլի, կըլի»ն արտասանած է, և ստիկա մեծագոյն նշանաբանն է որ պէտք է ընդունուի ամենքէն : մնաց որ իրական վտանգ մը չի սպառնար իրենց : Կորովը, քաջալերանքը, զօրութիւնն է զոր պիտի տանին երկիր, և եթէ պարագային ներկայացած պահուն, իրենց «մարդ» ըլլալը արդեամբ ապացուցանեն, կըրնան շատ աւելի երջանիկ ըլլալ, քան օտարին այս կամ այն հիւրամերձ, նախատալից, արժանապատուութիւնը վիրատորոշ անկիւնը թափառելով :

Այս տարի քաղաքագիտական և գերազանցօրէն դարավերջիկ կողմուտի մըն ալ ներկայ գտնուեցանք : Կը գուշակէք թէ տեսարանը կողմուտի մէջ տեղի կուրենայ : Չը լուսած, չիմացուած, անգոյ օրէնքներու ուժով, մեր բոլոր դպրոցները ու դպրոցական հարստութիւնները յափըշտակուեցան : կտակներու նուիրական և անբռնարարի կամքն է որ ոտնակոխ եղաւ : իրենց ազգին ու մանուկներուն կրթութեան զգացումով տողորուած բազմաթիւ հայերու տենչանքներն են որ անհետացան, և ցա-

ւալին այն է որ կաթողիկոսը չի կրցաւ ընել ինչ որ կարելի էր, անհրաժեշտաբար պէտք էր որ ընէր :

Աննշմարելի չի կրնար անցնել նաեւ սա պարագան թէ եկաւ բուպէ մը ուր ուսու մամուլը ճշմարիտ պաշտպանը դարձաւ հայկական դատին : Թէեւ զայրուողին բողոքներու արձագանքը շուտ մարեցաւ, և սակայն բաւական եզու փայլեցնելու թէ հայերս բազմաթիւ համակողմներ, կարեկցողներ ունինք Ռուսիայէն ընդարձակ կայսրութեան մէջ, և ուսու հայկական որբանոցներու օր աուր ծաւալ գտնելը այդ համակողմեան մէկ նոր ապացոյցը չէ՞ : մնաց որ, միտիան այն երկիրն է որ բնաւ չի սիրեր որ իր ապագայի ծրագրերը, մտադրութիւնները ժամանակէն առաջ հրապարակուին. և կրէտէն ումակոծող Ռուսիան, հետեւեալ օրը փրկութեան հրեշտակ մը կը շրկէ հոն, Ետրկիտս իշխանի անուան տակ : հայկական ջարդերուն աչք գոցող Ռուսիայէն չէ՞ կարելի յետագարձ ապշեցուցիչ շարժում մը սկընկալել : այն Ռուսիայէն որ, ինչ որ ալ ըսեն, Թուրքիոյ անհաշտ թշնամին պիտի մնայ : և մինչև փերջ պիտի կատարէ իր մեծ, փառափառական, բայց նաեւ մարդասիրական դերը աշխարհի մէջ, որ է թուրք կայսրութեան շընչումը պետութեանց շարքին մէջէն :

Բայց ինչ որ ճշմարտապէս վեհ ու մեծ է, հայ տարրին տոկունութիւնն է որ երբեք չի լքանէր զինքը : Ամէն ջարդերու, հալածանքներու շարժարանքէն ետքը, երբ պահ մը անդորրանայ, խելաբերի, առաջին զգացումը որ կը ծնի սրտին մէջ Յոյան է՝ ապագայի յոյսը : վհատումէ, յուսահատութենէ այս խոսափումը, հայուն ճշմարիտ փրկութիւնը կը կազմէ : և որքան ալ իր շուրջը վիտան վհատեցնող, սպաննիչ թելադրութիւններ, թէ՛ պիղծ բերաններ է և թէ այլաոերած, իմաստակօղաններէ, հայը միշտ հայ է,

կենդանի է. և իր էութեան բովանդակ ուժով՝ աղաւտութիւն, հայրենիք, պատիւ կը պրոսայ :

Ճշմարիտ հայը իր ձայնը կը խառնէ ամբողջ հայութեան այս տիեզերական գոչին : Այս գոչը անհուն և ցնցող է. գոռում մըն է ուր խառնուած կան որբին և այրիին հեծկլուտքին հետ՝ անվեհեր երիտասարդին սպառնալիքները, և վրէժի անշէջ ձայնին հետ՝ դէնքերու սրտայնդիչ շաշուներ :

Եւ այս գոչով է որ հայերս, միշտ և ամէն ատեն անվհատ ու յուսալիր, մեր բազուկները կը կարկառենք ԳՅԻ պարիկին :


ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԻՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 25 Դեկտ.

Այս անգամ «կարեւոր» լուրեր ունիմ ձեր ընթերցողաց հազորդներու :

Անոնք որ մամէ ժամ կը պատահեն ազգին կենսական խնդրոց կարգադրութեան և բոս կարելուոյն բարօրութեան թուականի մը սկսելուն . . . մեծ ուրախութեամբ պիտի լսեն անշուշտ, սր Յարութիւն փաշա Տատեան, աւկանակու մէճիտիէ շքանշանով պատուեցաւ : Ասկէց աւելի ինչ կարեւոր լուր կրնայ ըլլալ : Բայց ամէնքը այսչափ չէ : Քաղաքական ժողովոյ անդամ Խըտըրեան է՛ք : Պալայի աստիճան առաւ : Տօքթ. Թորգոմեան որ պատրիարքի հացկատակներէն է, վարձատրուեցաւ Գ. կարգի մէճիտիէով և պատրիարքարանի եւ լեւմտից տեսուչ Զօպանեան, որ ազգին այս աղէտալի վիճակին մէջ և գաւառացի հայոց անօթութենէ տանջուած պահուն, ազգին 15 ոսկին կառնէ ամէն ամիս, բացարձակապէս անօգուտ գործի մը համար, նոյնպէս ստացաւ Գ. կարգի մէճիտիէ. զեռ կուղէք. այս կա. գին մէջ Բուպէր է՛ք. մըն ալ կայ (մի զարմանաք, հրեայ չէ, թէպէտ հայ ըլլալն ալ շատ ջուր կը վերցնէ) որ մէկ երկու ամիս առաջ ալ դարձեալ պատրիարքարանի



պաշտօնեայնություն հետ պատուանշան ստացաւ : Այս միտանձնաւորութիւնը, Օրմանեան պատրիարքի գիմումով, տուեալ տրական նախարարութեան մէջ պաշտօնի կոչուեցաւ և անկէջ ի վեր այս երրորդ անգամն է որ պատրիարքական թագրիրով պատուանշան և աստիճան կառուէ : Բայց գետ չըսինք թէ ի՞նչ է այս մարդուն օգտակարութիւնը : Այս «անձնաւորութիւն»ը կայս պալատին առաջին քարտուղարէն հրահանգներ կը բերէ, կը տանի պատրիարքին, և Օրմանեանի անձնական գործակալութիւնը կընէ ատրութեան այլ և այլ պաշտօնատարներու քով : չա՞րժեք որ այսպիսի կարեւոր պաշտօնեայ մը վարձատրութիւն տրուանով ու պատուանշանով միայնգամայն :

Ապրին ամէնքն ալ :

Այս կատակերգութիւնը պրոֆանք կը պատճառէ այս տեղ :

Գաւառներէ դէպքով խնդրագիրներ կը հասնին ամէն շաբթու և փոխանակ աստեց և կեդրոնին յարաբերական գործոց մղում աւալու, (պատրիարքական թագրիրով) նշան խնդրել, այն կարգի մարդերու, որոնցմէ մալի չափ օգուտ չի կայ հանրութեան : Եւ ի՞նչ եղաւ հետեւանքը : Իսկոյն նշանները տրուեցան և Մանգեան առիթը ակնկալուած կայս : ներումները : Կնէ ևնէ, շուրջ ինկան : Գործին քնակաւ հետեւանքն ալ այս էր արդէն :

Յարութիւն փաշայի նշանը տրուած է շնորհիւ Մշակի Գիրուկին : Ինչպէս կը հաւատեն այստեղ, փաշան իրեն համար գրուածները թարգմանելով ներկայացուցեր է կայսեր, որուն փոխարէն մէծ ծոխէի ակնակալու ու շնորհուեր է իրեն : Յարութիւն փաշա պարզ մէծ ծոխէիները ամէն օր կը գրպանէ արդէն : Գարակէօզեանի կտակին 20,000

ոսկէն իրաւախօսութեամբ կարգադրուելուն առթիւ այնքան ակնարկ ու վախեր արձակող այս բարձրաստիճան պաշտօնատարը, չը խղճահարուիր արդեօք, երբ սրտամորմոք գրութիւններ կը հասնին և ազերարկու ձայներ կը լսուին ասկից անկից, առնք քանի մը հազար սակիւնց կտակի մը չա՞ր ալ արժեք չունին :

Վերջապէս իրողութիւնը այն է որ, խիղճը և զգացումը միայնգամայն պակասը են մեր ազգային գործերը վարողներէն : Օրմանեան արդէն բացէ ի բաց կը սէ «չեմ կարծեր որ Գլխայ մէջ քննակար անձինք գտնուին, այդ սարբերը հեռացուց են» : և իր այդ ներքին համոզմամբ ու հաւատքովը առանց մէկէն խնդրելու և Աստուծոյ երկնչելու, կը գործէ ուզած կերպովը : Ի՞նքն է որ Բիւզանդիոնի մէջ գրել կուտայ թէ Մշակի Գիրուկը, Ղեւոնդ Թպիսկ, Շիշմանեանն է, որպէս չի եթէ քիչ մը շունչ ունի մարգը՝ այն ալ խափանէ : Ի՞նքն է որ ձեռքի տակէ այս ու այն եկեղեցականը կարատուորէ կառավարութեան առջեւ և բեմբեմբեմ «միւղէվիւր»ի բերան ծախելով, կաշխատի ժողովուրդը զըրուել և ապիւրուութիւնները ծածկել :

Ի՞նչ պիտի ըլլայ աստեց հետեւանքը, ո՛չ ոք գիտէ՝ միայն թէ վերջացող 1898 տարեայն համար մենք կրնանք ըսել ազգային անիշխանութեան տարին է, և նոր սկսող տարեայն համար ալ այդ թուականին շարունակութիւնը :

Կը սպասենք նորանոր յաջողութիւններու կամ սեւի ճիշդը՝ նոր պատուանշաններու զորս ազգին պատաստունը զգեստներուն վրայ պիտի կախենք :

Մէկ քանի օրէ ի վեր ստականական հակողութիւնները շատցած են, պատճառն այն է

որ կայս թիկնապաշտ Ղեյր սպաննող Հաֆրդ փաշան կը վերնաշուրտի ամենայն հեռակալութեամբ : պալատէն խիստ հրամաններ արուեր են ստականութեան նախարարութեան ոճրագործը ձերբակալելու : Խեղճ նախարարը գիշեր ցերեկ գլուխը քարէ քար կը վարէն այդ մարդը երեւան հանելու համար ու չի յաջողիր :

Սպանեալին նորանոր շահատակութիւնները երեւան կելլեն, վերջին զէպրիբու տաթիւ խել մը հայ վաճառականներ ու սեղանաւորներ սպառնալիքի տակ մեծ գումարներ տուեր են իրեն : Վերջապէս մեծ շարիք մը վերցյաւ մէջտեղէն : բայց լըսեն թէ մարդասպանը երբ ձեռք անցուի ծանր պատժոյ պիտի ենթարկուի :

Վերին անդամ Վառնայէ պարձուցներէ մեծ մաս մը զի ոտականութեան բանտը լը մընան, որովհետեւ վերայիշեալ սպանութեան գործին պատճառաւ, ուրիշ գործով չեն կրնար զբաղիլ և անոնց հարցաքննութիւնը օրէ օր կը մնայ : Կը լսուի թէ կիրճեան այս օրերս թողաւ իր կողմերը պիտի զ կուի իւրեւ աքսոր :

ՆԵՏ
Փ. Պոլիս, 28 Գեկտ.

Արքէն վարդապետ կը շարունակէ իր խոտվարութիւնները : Իր օգնականներն ալ, որք թափթփուքներն են յեղափոխութեան, ամէն քար կը վերցնեն տակէն օգնութիւն գտնելու յուսով : Երբ յեղափոխական անունը կրող վարդապետ մը եւ իր գործիչները կը գիշանին, մինչեւ իսկ ամենէն ստորին թրքամուրհուրն ոտքերը լզելու : ալ կրնաք երեւակայել թէ ուրիշ ինչքը չեն ընել : Յոյս չունին, թէ պիտի կրնան կեղծ այցելու հովի անունը պահելու : հեռեւապէս հանրագիր մը զր. ամ են Պատրիարքարան, խնդրելով որ Արքէն վարդապետ հոս մնայ իբր քարողիչ : Մէկ անձը սասար տարբեր ա-

նուններով ստորագրած է այդ հանրագրին մէջ : Իսկ շուրջապէս մէկ քանի բռնի ստորագրել տուած են զայն իրենց խեղճ գործակալներուն : Արքէն վարդապետ կրնայ ուրիշ ստորին միջոցներու ալ գիմել հոս մնալու համար, սակայն թող վստահ ըլլալ, թէ երբ ժողովուրդին համբերութիւնը հասնի, ամենայն խալտաուկութեամբ պիտի վճռուի եկեղեցիէն, ինչպէս վճռուեցաւ ուրիշ քաղաքներէ :

Այս հանրագիրը պատրաստող անթիւներու խումբը խնձոյթի շարժումն էր վարդապետին կողմէ : Ամէն տեսակ խորտիկներ, անուշեղէններ և յունական պատուական քոնեաք առատօրէն կը մատակարարուէր անթիւներու խումբին, որ երկար ժամանակէ հետէ այսպիսի առատութիւն տեսած չէր : Արքէն վարդապետը, ամէն օր իր խմբակին հետ կը ճաշէ և սասնեակ քիչ գիւններ կը խմէ ազգիւր վարկովը : Կը խնդրէ թէ արդէն մասնակի վճարում մը եղած է գիւնեպանին և ճաշարանապետին, բանկային կողմէ : Թող թաղական խորտուրդը կարծէ, թէ իր նրամաններ կը գործադրուին և թէ շուրջապէս կը հոգան վարդապետին ապրուստը : Անոնք այնչափ յիմար չեն, որ իրենց կիրքը յագեցնելու համար եկած վարդապետին համար մէկ քանի ֆրանք ծախք ընեն : Ազգին զրամը շարժելէ գաւ, ոչինչ ըրած են ցարդ եւ ոչինչ պիտի ընեն :

Առիթով ըսենք նաեւ թէ ժողովուրդը վերջին ծայր դժգոհ է Տ. Սարգիս քահանայի ընթացքէն : Կը լռէի մինչեւ հիմա : վասն զի կը կարծէի թէ Արքէն վարդապետի ուղղումը հարուածները կրնայ ազգին անոր վրայ ալ : Գեղախառար օր ըստ օրէ աւելի կը վախճարուայ, և եթէ քիչ մը ժամանակ ալ չը չափէ իր վարքը, բարքը, պիտի ստիպուեմ զուր մըն ալ բանալ վեր քահանային, որ անպատուութիւն կը բերէ հայ ազգին և եկեղեցիին :

Մեր շուրջապէս շատ բարկացիւր են, որ ճարտուր թղթակիցը կը յանդանի վերցնել վարդապետը և անոր ետեւ գործուածները յայտնել : Երկու անգամ հաշո եքնիչ յանձնաժողովներ կազմուեցան, եթէ անարտու էին, ինչո՞ւ արգիլք եղան անոնց գործուելութեան : Երեք տարիներ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (10)

ՀԱՅԻ ԳԻՆ

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԷ

ԺԷ.

Մշուշը փարատած էր դուրսը : երկինքը պարզուած եւ արեւը հորիզոնէն վեր ելած, վճիտ կապուտին մէջ կը կախէր ճառագայթները ստատօրէն : հրապարակը եւ փողոցները հեռազենէ կը լեցուէին հոտոցող բազմութիւնով մը :

Խենթ աղբարը կը քալէր առջեւէն, քիչն տակէն երգի պէս բան մը մրթմրթալով : Իսկ Աստղիկ անոր կը հետեւէր, գլուխը ճկած եւ ձեռքերը ծոցը, զլխատան քեմի առաջնորդուող դատապարտուածի մը պէս :

Բաւական քաշեցին այսպէս լուռ ու մուռն, երբ հասան հրապարակին ծայրը, առանձին տեղ մը, խենթ

աղբարը յանկարծ կեցաւ և Աստղիկին պահալով ըսաւ .

— Ես խենթ եմ, գիտե՞ս :

Աստղիկ աս տարօրինակ ու յանկարծական հարցումէն զարմացած, առաջին անգամ ըլլալով իր առաջնորդին նայեցաւ :

Վաթնուները մարդ մըն էր ան, անգոյն ու անձեւ զլխարկին տակէն երկայն ու աղտոտ մազերը, առջեւէն ճակատը կը ծածկէին ու հետեւէն մինչեւ ծոքակը կը հասնէին, երեսը ամբողջովին գոցուած էր ձեռքովը ու անխնամ մօրուքի մը մտացառուտի տակ : Երկար հինաւուրց վերարկու մը կարծ հասակը կը ծարարէր իր ամբողջութիւնովը :

— Ես խենթ եմ, գիտե՞ս, կրկնեց ան, աս անգամ Աստղիկի թեւը ցընցելով :

— Չէ, չեմ գիտեր, պատասխանեց Աստղիկ, որ ատ օրուան կրած յուզումներէն քիչ քիչ ինքն ալ կը սկսէր իր ինքնութիւնը կորսնցնել :

— Հա՛, յե՞ս գիտեր, ուրիշն հիմա կը հասկցնեմ : Բայց մի՛ վախարար,

աւելցուց : տեսնելով որ Աստղիկ սոսկուած մը իրեն կը նայէր : ևս վշատակար խենթ չեմ, աւելի խելացիներէն վախնալու է հիմա :

Խենթ աղբարը գլուխը ձեռքերուն մէջ առաւ պահ մը, և աւելի ինքն իրեն խօսելով ըսաւ .

— Խենթ եմ, այո՛, խենթ, ուրիշ ինչ անուն կրնային սալ ինծի, հոգ չէ, խենթ մը կը մնամ, աս աւելի լաւ : ու նրէն Աստղիկի գաղտնալով ըսաւ, քալէ՛, Մարկոս աղային տունը բաւական հեռու է, ան զեռ պսոկած տեղէն ելած չէ, ուրիշ կրնար ալ տարած եմ հոն : խօսելով կերթանք :

Վերսկսեցին իրենց ճանապարհը : քիչ մը վերջը նորէն կեցաւ խենթ աղբարը, ու խօսութեամբ ըսաւ .

— Ինչո՞ւ թողուցիք ձեր երկիրը, ինչո՞ւ հոս եկաք, հոն թուրք ու քուրա կար չէ՛, որոնք ձեր պատիւը կը գողնային, և ձեր ունեցածը կը յափառակէին : Բայց հո՞ս, հոս ի՞նչ կընեն :

Խենթը իր նայուածքը պահ մը պտուեցուց բոլորսիքը, վերն ու

վարք, աչքերը, միակ կենդանի կէտերը իր երկայն վրայ : սկստ արտայայտութիւնով մը լեցուեցան, ու աւելցուց .

— Նայէ՛, որչափ մեծ է աշխարհքը, քան տարի է որ անոր մէկ ծայրն միւրը քալած եմ ու կը քալեմ : աս մէջ տեղ ամբողջ է որ քրտինք արցունք ու արիւն կը թափէ : ամենէն քաղաքակիրթ ու յուսալիրուած սեպուած երկրէն մինչեւ յետին վայրերին, մոռացուած անկիւնը, մարդը միշտ շար, հասաէր ու անգուժ գտած եմ :

«Մի՛ կարծեր թէ միայն վեր հայրենիքին մէջն է որ անխառնութիւն կը տիրէ, գոհեղ միտակ մենք չենք : Ապականութիւնը ամէն տեղ է : աշխարհք ամբողջ հիւսնող է, անպիտան փտախտ մը անոր ընդերքը կը հատցընէ՛ անհրաժեշտ է հիմէն վերանորոգել գտնել, պէտք է խնջոր անդամահատութիւններ կատարուին անոր վրայ» :

Խենթ աղբարը քիչ մը լռեց, քանի մը քայլ առին ու նորէն շարունակեց .

յան և թողնելով ինքնուրույն մը հաշիւ ներկայացնել յաջորդին : Այն ատեն արդէ յանձնաժողով մը կազմուեցաւ որ պահանջեց ամբողջ պաշտօնական թուղթերը , այս պահանջում անարեւելի մատնանայ , եւ Յանձնաժողովը անմիջապէս լուծուեցաւ : Հիմա ալ , ամէն միջոց կը գործածեն հաշիւը տարու համար : Չեն ամչնար խանութ թերթին մէջ հրատարակուելի վերջին թաղական խորհուրդի երկու անդամներն ալ պարտք ունին ասցին : Թողունք որ այս մարդերը տանը անգամ յայտարարեցին , թէ ցուցուցէք մեր հաշիւները եւ վճարենք մեր պարտքերը , եւ ենթադրենք թէ ունին , ուրիշ միջոցներ ցարդ ինչու : չը պահանջեցին եւ ինչու չեն օգնել մեզ , որ այդ դժուարները գանձենք : Ամէն մարդ զիտէ թէ եկեղեցիին եւ ազգին պաշտօնեաները անապին զեղծումներ գործած են եւ տակաւին այսօր կը գործեն , եթէ քաջութիւն ունիք , կազմենք չէղք եւ կարող սարքերէ Յանձնաժողով մը , եւ հոն ներկայանանք իրր ամբաստանող եւ ամբաստանեալ : Այն ատեն պիտի տեսնէք , թէ որչափ զեղծումներու վրայ տեղեկութիւն ունինք : Մինչեւ որ այսպիսի ժողով մը անջեւ չիլլէք , մենք պիտի նկատենք ձեզ , ազգին դրամները կողոպտող անարգ շարագործներ :

Չարքանալին սա է որ մեր փաստները բոլորն ալ քաղած ենք ջողաղաներէ : Չենք գիտեր թէ ինչ կոխերու ունին իրենց մէջ , թերեւս կողոպտուին բաժնիին համար ըլլայ այն : Չեղծումներու մասին բոլոր ջողաղաններն ալ իրարու համար այսպիսի մանրամասնութիւններ կը պատմեն , որ տարակրօս չի վերցնէր : անոնց օճիքը մեր ձեռքին մէջ է : ոչ մասնութիւնը , ոչ խոտվարար Արսէն փարպագիտը , ոչ անօթիներու խումբը կրնան ազատել մեր ձեռքէն : Թող երկար քարակ նիստ գումարին եւ Արարիկայի հոտած խանութպանին ազտոտ ներքուստեր գրին : մենք պատասխանելու չենք զիջանիւր : Ժողովուրդին զարգացած եւ անկեղծ գաւաակարգը զիտէ որչափ մաքուրը եւ խաբարն , անկեղծը եւ կեղծա որը ազգին վաստողը եւ օգտակարը :

ՏՕՔՈՂՈՐ ԱԼ ԱՌԱՐԷԿԱՆՆԵՐ

Հիւանդ կրնումնի ակեն օր առաւօտեան ժամը 8—10 և կիս օրէն յետոյ 4—6 , իր բնակարանին մէջ , նոքրայ , Տրակտեան փողոց , թիւ 18 : Աղբասները արի :

ՏՕՔՈՂՈՐ Յ. ՓՈՓՈԱԶԵԱՆ
ԱՏՕՄՆԱԲՈՅԺ

ՎԱՍՅԵԱԼ ԲԱՐՔԻ ԱՏԱՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԱՌԱՐԱՆԵՆ

Հիւանդ կրնումնի ակեն օր առաւօտեան ժամը 9 և յետոյ 4 և կիս օրէն յետոյ 5 իր բնակարանին մէջ Տրակտեան փողոց , 1206 , Մուսաղլա :

ԿԻՐԱՅԻ ՕՐԵՐԸ ՄԻՆՉԵՆ ԿԷՍ ՕՐ

ՔՐՈՆԻԿ

Պրէզիտէ (Ամերիկա) մեզ կը գրեն թէ տեղւոյն հայերը եկեղեցի մը կառուցանելու միջոցներուն վրայ կը խորհին : Այս նպատակին համար բացուած առաջին հանդանակութենէ մը 1450 դալարի արդիւնք մը զոյացեր է :

Պիտիլաէ մեզ կը գրեն թէ Գանուրի եղբրքը սփռուած հայ պանդուխտները խումբ խումբ իրենց հայրենիքը կը վերադառնան : Ուրիշ տաս օր անաջ մեկնած խումբ մը , Պաթումէն ուրախաձիթ լուրեր կը հաղորդեն հայրենիքի մասին :

Հայ-ուսական որբանոցներուն առաջինը բացուած է Բալուի մէջ , Բաղդադահայեաց Աստուածածնի վանքը , որ Հայաստանի ամենէն շատ ֆրատուած կեդրոններէն մէկը կը համարուի , եւ կը սպասուէ 2,255 չափ որբեր : Առ այժմ 25 ի չափ որբեր պիտի խնամուին և դաստիարակուին հոն չորս տարուան դասընթացով : «Կերպարական օգնութիւն Թուրքիաի ֆրատուած հայերուն» ժողովածուի խմբագրու-

թիւնը պատրաստութիւններ տեսած է բարի մտրդկանց նուէրներովը երկրորդ մըն ալ բանալ մտերս :

Կովկասի կառավարչապետը , գեկու 19 ին փառաւոր հացկերոյթ մը տուեր է Վեհ. կաթողիկոսին և անոր հետեւորդներուն : Անյեաները «Մշակոնէն առնելով գրած էինք թէ , Վեհեատիկի Միթրաբան Միաբանութիւնը իր տնտեսական նեղ (•) գրութեան պատճառովը անկարող է սպազրիլ Հ. Ալիշանի գործերը : Գ. Ս. Նահապետեան «Մշակոնի մէջ Վեհեատիկի Միաբանութեան տնտեսական կացութեանը վրայ խօսելով կը յայտնէ թէ , անոնք ենթադրուած չափ հարուստ չեն , և իրօք անկարող են առանց մեկնաւորի մը օժանդակութեան սպազրութեան յանձնել բազմաճմուռ Նահապետին երկերը , որոնք կարծուածէն աւելի բազմաճատոր են , և ամբողջն ալ հայ պատմութեան ու տեղագրութեան նուիրուած :

Փափագելի է որ միջոցներ ստեղծուին և ամբողջանայ Միտուանի , Այրարատի և Միտականի շարքը :

Մասնաւոր նամակէ մը կը տեղեկանանք որ Պ. Մելքոն Կիրճեան , որուն համար մեր Պոլսի թղթակիցը կը գրէ թէ Թոքատ պիտի աքսորուի , երբէն ամառոյս 26 ին աքսորուած է Գոթթէմուսի :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Սեբաստիոյ Եարհիտար գիւղէն Տօնիկեան Նշան անուն 27 տարեկան երիտասարդը , Պոլսոյ գէպքէն Եւրոպա անցած է : Տեղեկութիւն ունեցողներէն կը խնդրուի որ յիշեալին հասցէն իմաց տան «Եարթոմոնի խմբագրութեան» :

Մ. Տ. Բէտտլինճէ . — Չեր յիշած անձը հոս չի գտնուիր :

—Տե՛ս , մօրուքս ու խելքս ձեր վեցան , կատարուած անխրատութիւնները անանկուով : Ուր որ ալ գացի միշտ գտայ մեծկակ ամբօս մը որ կը չարչրուէր , կը զրկուէր , քաշնի մը խելացիներուն հաճոյքին ու խանգատութեանը համար :

«Բայց աս շատ երկար չի կրնար տեւել , չարչարուող , տանջուող ժողովուրդը , հիմակ իրաւ բան մը չի զգար , եւ ընդհակառակը կը քարկոծէ , կը հալածէ զինքը գիտակցութեան անաշխարհող մարդիկը , բայց օր պիտի զայն , եւ շատ հեռու չէ աս օրը , որ պիտի շատան ինծի պէս խելութիւն , եւ ան ատեն կուր պիտի սկսի . . . պըն . . . :

Խենթ աղբարը ողորդուած էր , աչքերէն կրակ կը ցատկէին , ձեռքերը լայն լայն կը շարժէր . խել Աստղիկ որ լսածներէն բան մը չէր հասկնար , ապուշ ապուշ անոր կը նայէր , իր միտքը աւելի հեռուն էր , ան իր զաւակներուն կը մտածէր , որոնք հիմակ արթնցած թերեւս իրեն կը քայտէին , բայց ի՞նչ կրնար ը-

նել , խենթին ձեռքն ինկած էր , եւ ուզեր չուզեր մտիկ պիտի ընէր :

Կը քայլէին , հասան ծովուն եզրքը , խելթ աղբար նորէն կեցաւ հոն , եւ մատովը երկինքը ցուցնելով ըսաւ .

—Նայէ՛ , ի՞նչ ազուր է վերը , ու երբ ես , ալ զգուած կեանքի ազտուութիւնները տեսնելի , ձանձրոյթ զգամ ապրիլէ , հոն վերը կը թռնի , ամպէ օրօրան մը կայ հոն , որ շանթէ շարերով կախուած է արեւէն , գիտես ի՞նչ լու է պակիլ հոն ու անհունութեան մէկ ծայրէն միւսը օրօրուիլ յաւիտեականապէս :

Կողմակի փողոց մը մտան , երկու կողմէն փառու որ չէնքեր կը բարձրանային :

—Խելացիներուն փողոցն է աս , ըսաւ խելթ աղբար : Ինծի համար աւելի ապահով է ինձան մը ամայի ճանրան միտութեան մէջ , քան թէ հոս : Իրաւ է հոս ոչ հրացանաւոր կայ և ոչ ալ դաժան , սպառնացող զէմք մը կերելի , բայց վստայը հոս աւելի մեծ է , անդուողը կայ հոս ,

ուր ինկողը ալ խալտու չուցի :

Ա՛հա , սա բարձր չէնքը Մարկոս աղայինն է . չեմ հարցնիր թէ ի՞նչ ընելու կերթաւ հոն , արդէն ամէն բան գիտեմ , առտուանց հոն էի երբ կիները վրադ յարձակեցան , ամէն բան լսեցի : Եթէ իրօք յանցաւոր ըլլայիր առաջի չէին չարչրկեր քեզի , քու անմեղութիւնդ անոնց հիւանդ ջիղերուն կը դպնար : Հիմա խրատ չեմ սար քեզի , դուն մայր ես , դաւաակներ ունիս , եւ անոնց սիրոյն համար ամէն բան ընելու պատրաստ ես , ինչ որ ալ ըսեմ պարապ բան է , դուն գոճ մըն ես արդէն : Մե՛ղք , դրամ ալ չունիմ որ քեզի շիտակ ճանրան տանիմ , ուժ չունիմ որ պաշտպանեմ քեզի , խելճ կնի՛կ , գնա՛ , գնա՛ նետուելու յարձանքին մէջ , բայց յիշէ խելթին խօսքերը , օր մը քու վրէժդ ալ պիտի լուծենք , միաս բարով , ալ իմ դիրս ըմբացա :

Խելթ աղբարը աս խօսքերը ըսաւ , ու արագաքայլ ետ դարձաւ : Աստղիկ թէեւ մեծ բուս մը չէր հասկըցած , բայց անքր վերջին խօսքերը

ԲԱՆԱԲԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

Գերմանիոյ կայսեր Պոլսոյ այցելութիւնը և գերմանացի բերուտին հայոց վրայ ըրած զըրպարտիչ գիտողութիւնը , որ Նաումանի միջոցաւ գերմանական լրագրի մը մէջ հրատարակուած էր , պատճառ եղած են գերմանական լրագրաց մէջ հայկական խնդրոյ մասին կարգ մը յօդուածներու հրատարակուելուն : Ասոնցմէ ոմանք այնպիսի գրուածներ են , որ ոչ միայն Թուրքիոյ կառավարութեան բարբարոսութիւնը և վայրագութիւնը երեւան կը բերեն և հայկական դատը կը պաշտպանեն , հապա նաև բուն իսկ իրենց կառավարութեան բռնած ընթացքը կը պախարակեն և կը դատապարտեն : Այս յօդուածներէն է հետեւեալը զոր կը քաղենք «Պաղլըր Անձայլըր» :

Փոքր Ասիայէ՛ գերմանական «նացիօնալ Չայդուսկոյի գրուած տեղեկութեան մը նայելով , թուրքերը այժմ իրենց հակահայ քաղաքականութեան հետեւանքները ամենագաւուն կերպով զգալու վրայ են : Թէ և քրիստոնեայ մեծ տէրութեանց մէջ մէկը չը գտնուեցաւ , որ ելլեր և հայկական արիւնալից հալածանքներուն և ոսկալի վայրագութեանց վրէժը առնէր , սակայն այժմ պատիժը ինքնին գալու վրայ է : Առաջին դառն հետեւանքն է , կարգ մը վիլայէթներու մէջ տուրքերուն նւազելը . ասիկա կոտորածներուն բնական հետեւանքն է : Թուրքերը հարիւր հազարներով աշխատաւոր հայեր ջարդեցին , մնացեալը կողոպտեցին և այսպէս ամենատառ տուրքերու ազդիւրը գոցեցին : Եւ որ առաջ բարեկեցութիւն կար , այժմ հոն սուկալի թշուառութիւն կը տիրէ : Տօքթ. Ռոսպախ անունով անձ մը ,

վնակի մը գուշակութեանը պէս , մոգական արդեցութիւն մը ըրին իր վրայ , ու նայեցաւ անոր ետեւէն մինչեւ որ ան փողոցին ծայրը անհետացաւ :

ՔԸ .

Աստղիկ քանի մը քայլ ալ առաւ , եւ հասաւ Մարկոս աղային դրանը առջեւ : Քաջութիւն ունեցած էր մինչեւ հոս գալու , բայց աս վերջին վայրկեանին իր ուժերը կը թուլնային , կը դողար երբ կը մտածէր թէ հիմա պիտի ելլեր ան մարդուն զիմացը , զոր կատէր բոլոր հողիւրը :

Ի՞նչ ընէր սակայն , զուակները անօթի , հիւանդ անդին իրեն կը սպասէին , երկար մտածելու ատեն չէր , վերջին ճիգ մը բրաւ , գուրը զարկաւ ու ներս մտաւ :

ՎԱՆԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ

(Շարունակելի)

որ անցեալ ամսու և այնան չա-
 փաստան պատած է, տիրող
 թշուառութեան սրտածմբիկ պա-
 կերը կը նկարագրէ և կըսէ պա-
 ղատագին, «կը խնդրեմ՝ այս գը-
 րութիւնը կարգացողներէն, որ
 ողորմին Հայաստանի մէջ տիրած
 սոսկալի թշուառութեան վրայ»:

Ամենատարու կարծիքն իսկ չէ
 կարող բուն իրողութիւնը ըմբռ-
 նել տալու: Եթէ դուք, ձեր
 աչքին առջեւը բերէք Գերմա-
 նիոյ այն գաւառները, որոնք ե-
 րեսնամեայ պատերազմին ասե-
 ան ամենասոսկալի կերպով ոտնակոխ
 եղած էին, թերեւս գաղափար մը
 ունենալ Հայաստանի ներկայ
 կացութեան վրայ: Ես վանի Ծո-
 վէն մինչեւ Եփրատ գետին ե-
 ղերքը, միայն մէկ հատիկ
 մը գտած եմ, որուն տուները
 և անասունները կողոպտուած,
 մարդիկները պաննուած և կը-
 նիկները բռնաբարուած չէին:
 Գիշեր մը իսկ չը կըրայ հան-
 գիստ կերպով քնանալ: Վասնզի
 օրուան մէջ տեսած պէս պէս
 թշուառութիւնները սիրաբար կը-
 տոր կտոր կընէին: Թող ասոնց-
 մէ ամէնաշատը տասը հազարը
 քրիստոնէական ողորմութեան
 օգնութիւնը գտած ըլլայ, բայց
 ինչ նշանակութիւն կրնայ ու-
 նենալ այսքան օգնութիւն: Հա-
 յերը շարգելու հրամանին հետ-
 նակ կողոպտելու հրաման գա-
 ցած էր: Բան մը որ արդէն
 հասկնալի է սոսնկ պարագանե-
 րու մէջ: Այս կողոպտումը տեղի
 ունեցած է այնպէս հիմնական
 կերպով, որ Հայաստանի հայե-
 յերը այժմ ստացուածքէ զուրկ
 են: Որ գիւղի մէջ որ քրիստո-
 րը իրենց հրամայումը գործը
 կատարած են, ամենաչնչին բա-
 նըն իսկ անկէ առած տարած են:
 Ամենէն առաջ իրենց աչքերը
 գիւղացուց անասունին վրայ
 տնկած են, հալի մէկ հատ ա-
 նասուն մնացած է հայ գիւ-
 ղացուց քով, և ասիկայ անգին
 նշանակութիւն ունի, որովհետեւ
 եթէ անասուն չըկայ, երկրագոր-
 ծութիւն ալ չը կայ: Ուրեմն Հա-
 յաստանը բոլորովին աւերակ
 դարձած է: Թէև կոտորածի ա-
 տեն արտերը չը արին, երկ-
 րագործութիւն ընելու համար
 հողը միայն բաւական չէ, որով-
 հետեւ ոչ գործիք, ոչ ալ անա-
 սուն կայ: Թուրքիոյ կառավա-
 րութիւնը կորսնցուցած է իր
 մէկ ու կէս միլիոն հայկական
 հպատակները, իր կոտորածի ցը-
 նորած հրամաններով, որովհե-
 տեւ, Հայաստանէ երկար ժամա-
 նակ կարեւոր եկամուտ մը պի-
 տի չեղլէ, ինչպէս որ քամուած
 լիմոնէ հիւթ չեղլիւ: Եկամուտից
 կորուստը հակահայ քաղաքակա-
 նութեան միակ հետեւանքը չէ,
 երկրորդ դառն հետեւանքը այն
 է, որ երկիրը այժմ ըմբռ-
 քրիստոնէական ձեռքն է, որոնք հա-
 յերը կողոպտելու համար կան-

չուած և շարգելու համար զէն-
 քեր ընդունած են: Հետեւեալ
 նկարագրութիւնը գաղափար մը
 կրնայ տալ անոնց շահասակու-
 թեան մասին: Քրիստոնէոյ զօ-
 րաբաժիններու հրամանատար Ա-
 քի վաչա, որ միլիոններու արժո-
 ղութեամբ ստացուածք գիւղած
 է, կը պաշտպանէ քրիստոնէ-
 րը, ոչ միայն այն ժամանակ,
 երբ ասոնք հայկական գիւղ մը
 կողոպտեն, հապանակ երբ քրի-
 տերը թուրք գիւղերու վրայ ալ կը
 յարձակին և կը կողոպտեն: Նա-
 անգամ քրիստոնէ գիւղացիները
 կը մեռնեն և անոնց տեղը ի-
 րենք կը բնակին անոնց տունե-
 րը: Այս կերպով գիւղ գիւղի ե-
 տեւէ փճանալու վրայ է, Յայ-
 նի է թէ մարդասպան և կողոպ-
 տիչ քրիստոնէ մեծ թիւով
 գործածութիւնը, հայերը փճա-
 ցնելու սոսկալի գործին մէջ, ա-
 նոնց հպարտութիւնը վերջին
 ծայր զօրացնելու պատճառեղած
 է: Գիւղացին պարագայ տեղը վա-
 լին կը գիւղէ և իր ցաւերը կը
 յայտնէ: Վալին անկարող է ա-
 ւաղակները հալածելու և պատ-
 ժելու: Կը կարծուի թէ Աքի
 փաշա կը խորհի քրիստոնէան
 մը կանգնել:

Թ Ո Ւ Բ Ի Ա

Կ. Պոլսէ կը գրեն «Էնտերան-
 տանս Պէլժոնի»:

Մարէշալներու ժողովը միայն
 Ենտերան գործերուն չէր վերա-
 բերէր, այլ նաև բանակին զօ-
 րացման խնդրին: Թուրքերը կը
 փափաքին կատարելագործուած
 բանակ մը ունենալ, և որովհե-
 տեւ յունական տուգանքէն տա-
 կաւին երկու երեք միլիոն ոսկի
 մնացած է Օսմ. պանդալի մէջ,
 կուզեն այդ գրամով հրետանի-
 ներու կազմակերպութիւնը կա-
 տարելագործել:

Այսպէս, այս նպատակով կազ-
 մուած յանձնաժողովը վերջերս
 Չաթալճալի մէջ Բանէ և Ման-
 թէլ ըսուած թնդանօթներուն
 փորձերը կատարեց: Այս ըն-
 թացքով, քանի մը տարիէն
 թուրքիան արդարեւ զինուորա-
 կան իրական ոյժ մը պիտի ու-
 նենայ, և ասոր պատճառն այն է
 որ, Թուրքիան քրիստոնէայ պե-
 տութիւններէն օգնութիւն գը-
 նելու յոյսը կտրած՝ իր սեպհա-
 կան ուժերուն կողմէ վստահիլ,
 բազմաթիւ թշնամիներու զէմ
 գնելու համար:

Մակեթոնիոյ խնդրին վերա-
 բացումէն ի վեր թուրքօ-պուլ-
 կար յարաբերութիւնները ձգ-
 տուած են: Պոլսոյ մէջ վախ կայ
 թէ մի գուցէ, յառաջիկայ
 զարնան, եթէ Չարը Վիէննա
 այցելէ, Արեւելեան խնդրի մա-
 սին նոր համաձայնութիւն մը
 առաջ գայ:

Եւ որովհետեւ կասկած կայ թէ
 Պուլկարիան միջոցներ կը փըն-
 տրէ երկու տէրութիւններուն

միջամտութիւնը հրաւիրելու,
 Մակեթոնիոյ բարենորոգումնե-
 րը գործադրել տալու համար,
 բարենորոգումներ՝ որոնք հա-
 կառակ կը թուին օսմանեան շա-
 հերու, ուստի բնական է որ
 թուրքերը իրենց տհաճութիւնը
 յայտնեն Սօֆիայի մէջ:

Միւս կողմէ, այն գաղափարը
 թէ Անգլիա, հայկական խնդրե-
 ներու մէջ Ռուսիոյ կողմէ կրած
 պարտութեան վրէժը լուծելու
 համար, յետաձգել պիտի տայ
 մակեթոնական խնդիրը, այն-
 քան մեծ վստահութիւն չի ներ-
 չնչեր: Խնդիրը սա է թէ Ռու-
 սիա և Աւստրիա գիւանադիտա-
 կան լուրջ ձեռնարկ մը չը սկը-
 սին Պոլսոյ մէջ Մակեթոնական
 խնդրին համար:

Կը յուսացուի թէ գործը այս-
 պէս կը կարգադրուի և երկու
 պետութեանց խաղաղասիրական
 հաշիւները կը յաղթանակեն:
 Ռայց նոյն իսկ եթէ արիւ չը կըր-
 ըլլայ, Մեծն-Բրիտանիան չի կըր-
 նար փոխել իր բու ընթացքը:
 Ինչ որ ալ ըլլայ, Պոլսոյ Անգլ-
 դեսպանին փոխուելէն ի վեր,
 անգլօ-թուրք յարաբերութիւն-
 ները բարելաւուած են: Թուրք
 անգլիասէրները սկսած են թը-
 ւել այն բարիքները որ կրնան
 ծագիլ թուրք-անգլիական լուրջ
 համաձայնութենէ մը:

Այսպիսի համաձայնութեան մը
 արգելքները բոյն դրած են
 նոյն իսկ Սուլթանի մտքին մէջ:
 Ապաւլը-Համիտի նախապաշա-
 րուսները Պէրլինի դաշնագրին
 ստորագրուելէն ի վեր կը սկսին,
 այն ատենէն երբ Պիկոնսֆիլա և
 Սալզպուրի, Սուլթանին կարծի-
 քով, բաւական զօրեղ կերպով
 չի դիմագրեցին ռուսիան պա-
 հանջումներուն:

Այդ վայրկեանէն սկսեալ Անգ-
 լիոյ վրայ դրած վստահութիւ-
 նը վերցաւ, և անգլօ-թուրքական
 երբեմնի բարեկամութիւնը ա՛լ
 չի կրցաւ յարատեւել Եգիպտոս-
 սի գրաւումէն ետքը, և հայկա-
 կան շարգերու առթիւ կլաստ-
 թոնի, Ռուսիայի, Բըմպրէի
 թրքատեաց զղացումներուն առ-
 ջեւ:

Հիմա անընդհատ ա՛լ աւելի
 լայնցած է: Երբեք Թուրքիան
 չի պիտի մերձենայ Անգլիոյ,
 որքան ատեն որ Սուլթանը այն-
 քան մեծ վտանգ մը կը զգայ
 Ռուսիոյ կողմէն: Թող որ Լոն-
 տոնի մէջ ալ երբեք այս մեր-
 ձեցումը գոյացնելու միջոցնե-
 րուն վրայ չեն խորհած, նոյն
 իսկ անգլօ գերման մերձեցումի
 մը, որ վերջապէս Թուրքիոյ
 հետ բարեկամանալու նախակա-
 րպետը կրնայ ըլլալ:


Առ այժմ, Թուրքիոյ մէջ
 հայկական նոր խռովութիւններու
 ծագման սպառնալիքը լուրջ նը-
 կատուութեան չառնուիր, և
 Սուլթանը վերջին փոթորիկ-
 ներէն ետքը, անգիտանալ կը

ձեւացնէ թէ Երկիրս իշխանը
 կրէտէ մտած է Ս. Նիկոլայի առ-
 նին օրը, ճիշտ այն ժամուն,
 երբ Նիկոլայ մեծ դուքսը, կա-
 լաթարիսի ռուս յիշատակաբա-
 նին բացօ մը կը կատարէր:

ԲԱԶՄԱՎԷՊ
 ԱՄՍԱԹԵՐԹ
 ԾԵՊ ՏԱՐԻ
 Տարեկան գին՝ 10 Քր. — և բուպ-
 լի. — 2 Տուրս:
 Հասցէ՝ Բեռնաքսիոն տը լա ուղիւ
 Բազմավէպ. Ս. Լազար:
 Վընիզ (Իթալի)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
 —
 Տէր Աւետիք Գ. Փափազեանի
 հայերէն—ռուսերէն տարե-
 ցոյցը, պատկերազարդ և ճոխ
 պարունակութեամբ: Գինն է
 թղթակազմին 1 Քր. լսթա-
 կազմին 1.50 և փառակազմին
 2 Քր.:
 Գլ մեկ հեղինակին, կալուց:

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ



Եթէ կուզէք հագնել չոր-
 չիկներ որոնք իրենց վրայ
 միացունեն ձեւի և գիմաց-
 կունութեան կատարելու-
 թիւն և մանաւանդ գինի չափաւ-
 րութիւն, սոսնց վարանելու գիմե-
 ցէք Ստեփան Խորասանեանի, Մու-
 սալա, բաղնիք փողոց, հանրահասան
 Էֆէնսիլի օթիլին տակ, հաւատացե՛ք
 որ ստիթէն պիտի օգտուիք:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ, «ՍՐԺՈՒՄ»-Ի
 —
 Կը տպագրուին ամէն լեզու
 այցետոմս, հասցեատոմս, նամա-
 կազուլս, հարսանեկան հրաւի-
 րագիր, մահազգ, ինչպէս նաև
 պրօշուրներ:

Գիներն յոյժ գիւրամատչելի:
 Ուրիշ քաղաքներէ եկած
 յանձնարարութիւններ ճշգու-
 թեամբ և փութով կը կատար-
 ուին:

ՏՊԱՐԱՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ
Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ
 Վ.Ս.Ն.Ա.
 Սեկորոյ քաղ. Եփրէսեան փողոց.
 Սուզալը Զեռէի կից.

Կը տպագրուին հայերէն, պաշտօն-
 րէն, գաղղիերէն, յունարէն, ասորերէն,
 և այլ լեզուներով այցետոմս, հասցե-
 տոմս, հարսանեկան հրաւիրագիր, աչ-
 դարարութիւն, նամակազուլս, պոստ-
 րան, մահազգ, փոճառակազմութեան ամէն
 տեսակ գործեր, գիրք, լրագրիչ և այլն:

Գումար եւ ոսկեգօծ գաղազուե-
 րու համար ամէն լեզուէ ճոխ տառ եւ
 մասնաւոր գործիքներ կը գտնուին:

ՄԵՆ ԽԱՄԳ ԵՒ ՄԱՐՈՒՌՈՒՆ
 ԳԻՆԵՐԸ 808Ժ ԳԻՆԻՄԱՍԱՅԻԻ
 ՈՐԵՆ ԵՎՈՒՆԵՐԻ ԵՒ ԵՆՆԵՐՈՒՆԵՐԻ
 ԻՐ ԷՔՍՊՈՒՄ ԵՒ ԳՈՒՆԵՐ ԵՒ ԵՄՊՈՒՆԻ

Отговорникъ: А. СУКЯСОВЪ.
 Печатница „Взаимность“, Варна